



ԱՐԾՈՒՄ ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԹԵՂԵՍԻ
ՏԵՂԵՍԻՆԻ ՄԵԼԱՍԵՐՆԵՆ Ե ՎԵՐԵՎԱՆԻ


ԽՐԵՍՏԻԱՆ ԿՆՅԱՆՆԵՐՈՍ
ՄԿՐՏԻՉ՝ ՎԱՐԻՆՊԵՏ ԽԻՄԵԱՆ

1864

ՇՐՋԱՆ Ե ԽՅԱՆՈՐԴ

ԹԻՖ 3

Ի ՏԵՂԵՍԻՆԻ ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՈՒՄԵՆ
Ի ՎԱՍԿԱՆ



THE
PUBLISHED

OF THE
OFFICE OF THE

OF THE
OF THE

1881

OF THE

OF THE

OF THE

OF THE



ԱՐԾՈՒՐ

ՎԵՍՊՈՒՐԵԿԵՆ

ՇՐՋԱՆ 2

1864

ԹԻՒ 3

ԽՐԱՏՔ ՀՈԳԻՈՅՆ ԱՌ ՄԱՐՄԻՆՆ (1)

ԱՐԴԱՐԵՒ Հոգւոյն մարմնոյն ըստ սուրբ գրոց. տո-
ւած ընտիր ընտիր փրկարար խրատներն անթուելի են.
որոց վերայ մինչեւ ցայժմ անբաւ հատորներ ալ գրուած
են եւ կգրուին. այո անկարելի է այս անձուկ էջերուն մէջ
գոնէ նոցա համառօտութիւնն անդամ պարունակել. բայց
մեր միտքը միայն սա երկու մասերուն վերայ է. այսինքն
Առաջին. այն անձանց համար, որոնք առաքինութիւն

(1) ՏԷ՝ ԲԵՃԷ՝ ՇՐՋԱՆ ՀԻՄՆԵՐՈՐԴ ԲԷ՝ 6 ԵՐԷ՝ 161

գործելու նպատակաւ աշխատած ժամանակնին, տգիտութիւն մտնողութեան մէջ ինկած են, որոց վրայ արդէն գրած եմք: Երկրորդ. հիմա ալ անոնց վերայ պիտի խօսիմք, որոնք ծուռ սկզբունքներն օրինաւոր համարելով, իւրեանց խիղճն զարմանալի տարօրինակ կերպով մը խաբել կուզեն. բայց ո՞վ չգիտեր որ զմարդիկ եւ մինչեւ անգամ սատանան ալ խաբելն կարելի է, բայց Աճ եւ խիղճն խաբելն այնչափ անհնարին են՝ որ վայրկեան մը անգամ մտածելու բան չէ:

Կտեսնաս որ մէկը այլ եւ այլ կերպերով յափշտակութիւններ ըրած ժամանակը, իւր խիղճն արդարացնելու ջանալով կըսէ. թէ ասիկայ իմ անոր այս ինչ բարերարութիւնն ըրած լինելուս փոխարէն վարձք մընէ. խիղճն ալ նորա ականջէն Առակախօսին վճիռը կփախայ ըսելով թէ, ըրած յափշտակութիւնդ նոյն իսկ կաշառակերութիւնն է որով հոգիդ սպաննեցիր. եւ առած ժամանակդ ալ հոգւոյդ մահը զգացիր միտքդ կուգայ թէ ոչ, նաեւ Երկնից բարկութիւնն ալ վրայդ շարժեցիր: Հոգին ալ միւս կողմէն սպառնալով կ'ըսէ Քրիստոսի այն խօսքը թէ, «Ա'նմիտ՝ յայսմ գիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջիցեն, իսկ զոր պատրաստեցերն՝ ո՞ւր լինիցի»: Ո՛րքա զանազանութիւններ կ'ըսէ եւ ազգասիրաբար կ'սոսիմ կգործեմ ըրածս հակառակասիրութիւն վրէժխնդրութիւն ետութենէ յառաջ եկած զգարիլ մը եւ նախանձութիւն մը չէ, այլ ազգին ճամբայ ցուցնել է. եւ ազգին օգտին համար ամէն բան ուղիղ դատողութեամբ խորին նախատեսութեամբ կ'մտածեմ եւ կ'լիճեմ. բայց իմ խօսքըս մտիկ ընող չկայ. այսինքն (հպարտութիւնը սնուցանող չկայ). բայց հոգին կըսէ. եթէ այդպէս է եւ եթէ քո-

գործքդ առաքինութեան, ազգասիրութեան հիման վերայ
 հաստատուած է, հապա այդ ինչ անհանդարտութիւն շը-
 փութութիւն խռովութիւն եւ սրտի անհանգստութիւն է
 որ զքեզ պաշարեր է. չեն գիտեր որ առաքինութեան
 ազգասիրութեան միակ նշանն պտուղն եւ արդիւնքն
 նորա մարդուս առատաձեռնութիւնն էր ընծայած ներքին ցան-
 կալի խաղաղութիւնն ու բախութիւնն եւ զուարթութիւնն է.
 որոնցմով մարդս ամէն չարեաց եւ նեղութեանց դէմ զար-
 մանալի դիւցազնութեամբ եւ արիութեամբ համբերելու
 կարող կլինի. ու հեղութեամբ եւ բարեաւ չարին կյաղ-
 թէ, այդ ինչ խղճութիւն է որ քու վերայ կոհանուի.
 ասկէց իմացիր որ քու ըրածդ ոչ թէ առաքինութիւն
 այլ մոլի կրկնգդ սանձը կոտորելով, կատաղի աչքերդ բա-
 ցած փրփրալով ասպարէզին մէջ նետուեր ես, լեռնէն
 կվազես դաշտը, դաշտէն լեռը, ոտքիդ տակը ինչ որ
 կայ կթնթես կկոխկռտես. ասելութեամբդ վրէժխնդրու-
 թեամբդ, բարկութեամբ ու խորամանկութեամբդ ազգին
 կանոնաց դէմ վարուելով եւ ամբողջ ազգի մը յառաջա-
 դիմութեան արգելք լինելովդ, բարոյապէս բիւրաւոր
 սպաննութիւններ ընելու վերայ ես. ուստի այդ կատաղի
 յիմարութիւնդ մէկ դի դիր, իմաստնացիր քանի որ ժա-
 մանակը ձեռքդ է, գիտնաս որ օր մը այդ խղճիդ աչ-
 քին առջեւէն թմբրութեան վարագոյրը վերնալուսն
 պէս, անբաւ արեան ահռելի տեսարան մը պիտի տես-
 նաս. այն ատենը քու ինչ սոսկալի անգութ դահիճ մը
 եղած լինելդ պիտի զգաս. որոց համար Երկինք քեզի
 կայենին ըրած հարցմունքներն ընելով պատասխան պա-
 հանջելու ատենը, միթէ դուն ալ նորա նման ոչ թէ
 եղբօրս, այլ բիւրաւոր եղբարցս պահապանն եմ պիտի ը-

սես . գիտեմ որ պահապանը չէիր , բայց ինչպէս համար-
ձակեցար եւ ինչպէս կարող եղար սպաննելու : Ամէն
որ եւ իցէ ազգային պարտաւորութեց դէմ գործող շա-
յերն , պէտք է այս կէտին աղէկ ուշադրութիւն ընեն . ու
այլ եւ այլ արդարացուցիչ սնտի պատճառներ մէջ բե-
րելով ինքզինքնին պարապ տեղը խաբելու չջանան . եւ
միանգամայն թող գիտնան եւ հաւատան , որ , Աճ ի կողմն
ազգին է , ուստի ոչ ոք կարէ հակառակիլ եւ վնասել նմա :

Բայց ի սոցանէ , որչափ մոլութեանց զեղծմանց խաւա-
րովն պատեալներ կան , որոնք իրենց ապօրինաւոր կամաց
եւ հաճութեանցը միշտ կողմնակցութիւն ընելով , յան-
դըգնութիւնը արիւթեան տեղ , կեղծաւորութիւնը շո-
ղոքորդութիւնը , այսինքն աւելի բացայայտ ըսելով գա-
զանաբար խաճատողութիւնը մարդավարութեան եւ սի-
րոյ տեղ , գողողութիւնը իշխանաւորի մը յատուկ եղած
օրինաւոր պատուոյ տեղ , որուն յատկութիւնը պիտի լինի
հայրական գթութիւն , քաղցրաբարոյութիւն եւ հեզու-
թիւն . իրեն խելքին հաւնելով եւ ուրիշներուն բերանը
կարկելով ու արհամարհելով , ժողովներու մէջ շունջ չառ-
նելով ճառատելը , ճարտարախօսութեան տեղ . խորաման-
կութիւնը խելացութեան տեղ եւ այլն եւ այլն ասոնց
նման շատ մոլութիւնք , այլ եւ այլ առաքինութեց տեղ
դնելով , ուրիշներէն աւելի ինքզինքնին խաբելու կջա-
նան : Բայց երանի այն անձանց , որոնք խղճին եւ հոգւոյն
անաչառապէս ամենայն իմաստութեամբ հրամանաց՝ մա-
նանեխի հատի չափ ալ դէմ գործելու վատութե չզիջանե-
լով , միշտ խաղաղ ու բախ եւ երջանիկ կեանք մը կվայելեն :

Յ . Ս . Կ . Գալիական .
Սիւստէն . Ս . Լիւդուիցի :

ԱՍՏԳԻԿՆԻՄ ՍԻՐԵԼԻ

Ահա թագւորն աստեղաց,

Դէպ յարեւմուտս խոնարհած

կամփոփէ իւր ճաճանչներ

Յովկիանու խոր անկիւներ :

Յարեւելս է իւր ծնունդն

Եւ հանդիստն իւր յարեւմուտս :

Շատ մոլորակներ ետեւից

Պայծառ աստղեր լուսալից,

Հանեց սիւռեց երկնից երես

Ամէնքն ալ են զուարթերեո :

Մեծ նոր հրճուանք մը տուին ինձ

Սոցա սիւռիլն կամարն յերկնից :

Բայց նոցա մէջ մին տեսի ես

Որ միշտ հայէր նա քմ երես .

կաթ մ' իր լուսից զարկաւ սրտիս

Եւ ընթացաւ հսկայի պէս :

Իբր սուրհանդակ արագապէս

կամ իբր հրեշտակ թռաւ աչքէս :

Ա'ն դու աստղիկ իմ աստղիկ

Մի վազվազեր վաղվաղիկ .

Քանզի ծանեայ քեզ քաջ ծանեայ

Որ աստղն ես դուն քաջին Հայկայ :

Ուրեմն փութայ առ իս դու դարձ

Ի փարստեւ սրտիս իմ թաղձ .

Երկնից կամարն այն շողջողուն

Քեզ պսակեց աստղիկ սիրուն .

Դադարեցո քո այդ ընթացք

Զի աչք իմ քեզ մնայ ամբողջ :

Եւ ես տեսայ գեղեցիկ

Յերկնից կամարն նոր աստղիկ :

Պայծառ ճաճանչդ որ դու զարկեր

Սեւ սիրտըս քեզ գրաւեցեր

Ոհ ինձ շնորհ եթէ լինէր

Ես հանգչէի ի քոյ այդ սէր :

Դուն հեռուն ես՝ երկնից շար

Եւ ես սիրովդ իմ սիրահար :

Քոյ ելեւէջդ արձակ արձակ

Մէջ այն գնդիցըն լուսափակ :

Հազար եւ բիւր ընկերներով

Կը փայլէիր շքեղ լուսով :

Կայցո՛յ՝ կայցո՛յ քո այդ ընթացք

Շող արձակէ վեր մեր տանեաց :

Հատիկ հատիկ անի քո լոյսեր

Բազմապատիկ եւ անստուեր

Եւ այժմ ժողովէ ի միասին

Չարկ իմ ազգիս կարօտ աչքին :

Աստղիկ աստղիկ ես կաղաչեմ

Եւ ծածկուիր յամպըն նսեմ :

Եւ արեգակն քո այն մեծ մայր

Լոյս թող տայ քեզ , տայ ինձ համար

Առնեմ ցնծամ ապրիմ նոքօք

Կեանս մաղթեմ աստղիդ հոլով :

Եթէ տաս ինձ լոյսդ համայն

Ինձ չպակսի եւ ոչ մի բան :

Արձակ արձակ իմ աղաչանք

Թող վերանսն առ արեգակն ,

Հաւաք հաւաք ո՛հ իմ աստղին

Թէ եւ լինի ժամ ցերեկին :

Ա՛ճ բարձրեալն որ քեզ վառեց

Իմ սէրն ընդ քեզ նա արծարծեց :

Բայց ինչ ապա քո այդ տեսիլ

Որ շատ անգամ ինձ կերեւիս

Մերթ կը ծածկես երեսդ սիրուն

Մերթ կը փայլիս շատ շողշողուն :

Արտօսը աչացս չեմ սրբեր ես

Թէ միշտ այդպէս դու զիս խաբես :

Այլ եւս երբեմն իբր Թէ հաշտ

Վտես ճաճանչդ յերկնուց մինչ աստ

Վառնես կտանիս իմ սէր ընդ քեզ

Բայց մէկ պահէն կը ձգես յետս :

Ո՛հ Թէ պարծիմ ես քոյդ լուսով

Մի Թողուր զիս խաւար մթով :

Քո ծագմանէն մինչեւ հիմայ

Ափշեալ հայիմ երբ քեզ տեսայ ,

Թողեալ խոր քուն որ ինձ պիտէր

Մնամ աստղիդ սիրոյն նուէր :

Աստղիկ աստղիկ ալ չեմ կրկներ

Քո սուրբ լուսեղ զիս մի գրկեր :

Անջինջ քո սէր ո՛հ վառ ի վառ

Արկ ի կրակն յայս իմ բուրվառ ,

Առնեմ խնկեմ ես յաւիտեան

Առ բարեարն՝ չտալ սասան :

Այս ինձ արա սիրոյդ նշան

Որ հանապազ քեզմով ցնծամ :

Ու ինչեւ հիմա երբեմն կանգնած
 երբեմն կերթար մերթ կառնէր դարձ,
 Փայլուն իւր աչքն առ իս ուղղած .
 Բայց աստ յանկարծ թեւերն արձակ
 Բացաւ մտաւ նա ամպի տակ :

Եւ ինձ եթող շող մի պայծառ .

Յետ իւր խօսքին « յուսա մի լար » :

Խորէն Յ . Խրիմեան Լշակերտ

Ժ . Պ . Պ արագայ :

ՏԵՍԱՐԱՆՔ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՅ

ԲԱՂԷՇ (1)

ԱՄՐՏՈԼՈՒ ՎԱՆՔ ՎԱՄ ԱՄՐՏՈԼՈՅ

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԵՍ (2)

Թէ եւ ըստ պատշաճի քաղաքիս մէջ եղած չորս եկե-
 ղեցեաց վերայ խօսելէն ետեւ , սոյն Ամրտօլու վանքն ալ
 Վանհօրէից կարգին մէջ պիտի գրէինք . բայց վանքը քա-
 ղաքին մէջի եղած թաղերուն մէկ մասովն շրջապատեալ

(1) Տեա Բի- 2 . Էրեւ 48 :

(2) Երբէմն Լճուրդայ Սուրբ Յովհաննէս վանք ալ կրաւ . նորա
 յէշաակարանաց Տէկուն Տէջ կարդացինք որ , Ժամանակաւ Լճիւր ե- ՏՊ
 անաւաճէ երկու- եղբայրներ սոյն վանքին ե- Եկեղեցւոյն վերայ նորոգու-
 Լիւն ըրած են . աւաթի ապէց . կրնաս հետեւցնել որ նոցա անաւաճէ Լ-
 ճուրդու վանք ըստաճ լինի : Բայց ամենէն աւելի Լճուրդի Բաւն աղա-
 ւապետելով Լճուրդ ըստաճ լինելն սպայգ է :

լինելով, հետեւաբար նոյն կողմերու ժողովուրդն ասոր եկեղեցիւն միշտ յաճախելնուն համար, մանաւանդ Առաջնորդարան, նաեւ տեղւոյն վանօրէից մէջ ամէնէն երեւելիւն լինելուն պատճառաւ, ամէնէն առաջ ասոր վերայ ստորագրելն արժան համարեցինք :

Սոյն վանքը քաղաքիս արեւմտեան կողմի ձորին մէջ շինուած է . իւրեան կից են Հայոց եւ Տաճկաց տուներն, որն ուր շուկային մօտ է . եւ Առաջնորդարան ալ լինելով, հետեւաբար միւս վանօրէից նման առանձնութիւն չունի : Առաջնորդներն յառաջուց ի վեր մինչեւ ցայժմ այս տեղը կ'նստին . թէ եւ խաներուն իշխանութե ժամանակներն, երբեմն խնդրակատար սուրբ Աճաճնայ վանքին մէջ ալ նստած են : Սոյն վանքն սկիզբէն ի վեր մինչեւ ցայսօր գիւղերէն թէմեր ունենալէն զատ, թէ իւր բոլորտիքի իւր անուամբ կոչուած թաղն, եւ թէ քաղաքին Սարմրակ սբ Նշան եկեղեցիւն իւր թէմերն են : Ինչպէս որ վանքին յիշատակարանէն յայտնի է եւ Առաքել պատմագիրն ալ կ'ըսէ, թէ սոյն վանքն առաջ անշուք եւ քայքայեալ լինելով, բազմալուիւն Բարսեղ վարդապետը բոլոր վանքն իւր եկեղեցիովն ի միասին ի հիմանէ նորէն շինել է . նախնի մատուռին տեղն, ուր այժմեան եկեղեցիւն շինուած է, տեղւոյն ազգայինքն աւանդուէր նորա պատին սրբատաշ քարերուն շարուածքին հիմակուանէն տարբերուի ունեցող նշաններն կ'ցուցնեն, ուսկից մատուռին մեծութեան չափն կ'իմացուի : Այս վանքին սկիզբէն որ ատեն շինուած լինելուն վրայօք յիշատակարանաց արձանագրութեանց եւ պատմութեանց մէջ թիւ մը չկրցանք գտնել . բայց ըստ որում միւս վանօրէից յիշատակարանաց մէջ նոցա Առաքելոց ժամանակը

շինուած լինելն նկարագրուած է , ուստի կրնամք հաւա-
նականաբար հետեւցնել որ , այս ալ այն ատենը շին-
ուած լինի : Ինչպէս որ տեղւոյն ազգայիքն կպատմեն ,
խաներուն ժամանակի քաղաքական խռովութեանց ժա-
մանակներն , աւագակներն սոյն վանքին եկեղեցւոյն գան-
ձատան հարստութիւնն քանի անգամ կողոպտեր են . կա-
րելի է որ նորա յիշատակարանն ալ նոցա հետ այն ատեն-
ներն կորսուեր է : Բարսեղ վարդապետին՝ զեկեղեցին որ
ատեն վերստին նորոգած լինելուն վրայօք գրուած արձա-
նաքարն ալ մօտ ժամանակներս տեսնողներ եղած են .
բայց շէնքի վրայ հաստատուած շինելուն համար , ե-
կեղեցւոյն ետքէն նորոգուելու ատենը որ կողմը ձգուած
լինելն չգիտցուիր , կ'ուսացուի որ ժամանակին գտնուի-
կարելի է որ վանքին առաջին հիմնադրութեան ժամա-
նակն ալ անոր վերայ գրուած է : Բայց մենք վանքին
մէջ գտնուած յիշատակարանէն այսչափ միայն լոյս ա-
ռինք որ , Բարսեղ վարդապետն զայն ասկէց 262 տարիի
չափ յառաջ 1602 ին ատեններն շինած է : Ինչպէս որ
յայտնի է եւ բնակիչքն ալ աւանդութիւն կպատմեն , վան-
քին բոլորտիքի տուներն հետզհետէ ետքէն շինուեր են ,
բայց որ ատենէն սկսուած լինելն յայտնի չէ : Սոյն բա-
րեյիշատակ Բարսեղ վարդապետին իւր ուսումնասիրու-
թեան վերայ ունեցած եռանդովը եւ աշխատութեամբն
ազգիս մեծ բարերարութիւն ըրած լինելուն վերայ հե-
տեւեալ թուոյն մէջ պիտի խօսիմք :

Եկեղեցին , վանքին հիւսիսային կողմն է , կամարակապ
եւ սրբատաշ կազուղ թէ մոխրագոյն եւ թէ կարմիր քա-
ռակուսի քարէ շինուած է . տաան եւ յէկ կամարն վեց
բոլորակ այսինք գլանաձեւ քարաշէն սիւներու վերայ

անատուած է . եւ սոյն սիւներուն չորսին վերայ կա-
 ռացեալ է Կմբեթը . բոլոր շէնքը երկայն քառակուսի-
 է . որուն երկարութիւնն 69 , լայնութիւնն ալ 46 ոտ-
 չափի է . նորա համեմատ ալ բարձրութիւն ունի : Թէ
 առ խորանը եւ թէ նորա երկու կողմի փոքրիկ խո-
 լաններն կամարակապ եւ կիսաբոլորակ են . Առաջ խո-
 լանին մէջ տեղը լուսամուտ մը կայ . ասոր անունն է նո-
 րա հաննէս Մկրտիչ . աջ կողմինը սուրբ Մտեփան-
 նոս , ձախ կողմինն է Աստուածածին : Սեղանը քարաշէն
 է , որուն երկու կողմերն երեքական ոտք սանդուխներ
 կան . աջ եւ ձախ կողմերուն սեղաններն ալ այս միջին
 սեղանին կցեալ են : Եկեղեցւոյն հարաւային կողմի չորս
 կամարին երեքին տակը առաստաղին մօտ մէյ մէկ պատու-
 հաններ կան . հիւսիսային կողմի չորս կամարներուն կողմը
 պատուհան չկայ . արեւմտեան կողմի երեք կամարներուն
 յարաւան չիւրին տակն ալ մէյ մէկ պատուհաններ կան .
 եւ այս տեղն է կանանց համար շինուած փայտաշէն վեր-
 նաստուը : Եկեղեցւոյն արեւմտեան կողմը մեծ դուռ մը
 կայ որն ուր երկու փեղկ ունի . արեւմտեան հարաւային
 կողմի դուռն ալ մէկ փեղկ ունի . այս ետքինը յաճախ
 կգործածուի : Հիւսիսային արեւելեան կողմն է սուրբ
 Լուսաւորչայ անուամբ շինուած քարաշէն կամարակապ
 աւանդատունն . որուն խորանին մէջ լուսամուտ մը կայ .
 ասոր դուռն հարաւային կողմը շինուած է , որն ուր եկե-
 ցւոյն հիւսիսային կողմի դասէն կբացուի : Եկեղեցւոյն
 առաջ խորանին սեղանին առջեւը երկու հատ միմեանց
 մօտ տապանաքարեր կան . որոց մեկուն տակը թաղուած է
 վերոյիշեալ Բարսեղ Վարդապետն . միւսին տակն ալ
 Վարդան վարդապետն . առաջինին քարին վերայ գիր

չկայ . միայն թէ նոյն քարին ուղղութեամբը , սեղանի
ճակատը հաստատուած քանդակագործեալ զարդարու
մարմարիտե՛կ խաչարձանի մը տակը , սա հետեւեալ ա
ձանագրութիւնն գրուած է :

ՈՎ ԲԱՌԱՆԻՇ ԶԷՆ ՅԱՂԹԱԿԱՆ .

ՆԵՐՊԵԱԼ ԱՐԵԱՄԲ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ .

ԲԱՐԵՆՕՍ ԱՌԱՆՄԱՀ ԱՐԲԱՅՆ .

ՄԵԾ ԲԱՐՍԵՂԻՆ ԲԱԲՈՒՆ ԱՆՈՒԱՆ .

ԹՎԻՆ Ռ . Կ . Ի . ՅԻՇԵՅԷ Ի ԲՐԻՍՏՈՍ .

Վարդան վարդապետին տապանաքարին երեսին երկ
րութեան վերայ ալ , շրջանակաձեւ փորուած է սա հե
տեւեալ արձանագրութիւնն :

Ի ՏԱՊԱՆԻ ԱՍՏ ԱՄՓՈՓԻ

ՄԱՐՄԻՆ ՄԱԲՈՒՐ ՄԵԾ ՀՌԵՏՈՐԻ .

ՏԵԱՌՆ ՎԱՐԻԱՆԱՅ ՓԱՂԵՐԱՅԻ (1)

ԱՐԻ ԵՒ ԲԱԶ ՎԱՐԺԱՊԵՏԻ .

ԽԱՐԱԶՆԱԶԳԵԱՅ ՃԳՆԱԻՈՐԻ .

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՈՐ Ի ՀՈՂՏԵՍ ՅԱՅՍ ՏՐՏՄԱԼԻ .

ԵԼ ԱՌ ՓՐԿԻՉՆ Ի ՅՈՅՍՆ ԲՆՈՒԻ .

Ի Գ . ՅՈՒԵԼԻՆԻ

ԵՐՐԵԱԿ ԹՈՒՈՎ ՅԱԻԵԼ ՈՐԴԻ .

ՈՐՔ ՀԱՆԴՊԻՔ ՏՈՒՔ ԶՈՂՈՐՄԻ .

Ինչպէս որ վանքին թէ յիշատակարանաց մեջ գրու
ուած է . եւ թէ տեղոյն ազգայինքն մեծ գովութեամբ
խօսելով կրատմեն , որ սոյն խմատասէր սուրբ վարդա
պետն ալ , վերոյիշեալ Բարսեղ վարդապետին աշակեր
տաց աշակերտներէն է եղեր . որ ինքն ալ ըստ ամենայնի
իւր նախորդին հետեւելով , նորա շինած փաբրիկ եկեղե
ցին աւելի մեծցուցեր և փառաւոր կերպով շիներէ . որն որ

(1) Վարդեայ Բառը , կերեալ թէ Վե քճանալի նշանակութիւն ունի :

մեծան շէնքն է ինչպէս որ վերը ստորագրեցինք . եւ
 յիշալ որ Թուոյն շինած լինելն ալ հետեւեալ երկու
 յիշաթիւ արձանագրութիւններէն յայտնի է : Նաեւս
 լինելն մէջի Բարսեղ Վարդապետին շինած դպրոցն ալ
 Թուոյն է , որուն մէջ աշակերտներ հաւաքելով դասա-
 թուութիւն կընէ եղեր . որուն անունն արժանապէս մին-
 թէ ցայժմ միշտ օրհնութեամբ եւ դուլութեամբ յիշա-
 րարեալ է եւ պիտի յիշատակուի : Վերոգրեալ արձա-
 նագրութիւններէն յայտնի է որ , եկեղեցին շինելէն ինը
 տարի ետեւ վախճաներ է . ըստ որում ԻԳ . ՅՈՐԵԼԻՆԻ
 ԵՐԵԱԿ ԹՈՒՈՎ ՅԱՒԵԼՈՐԴԻՆ , Հայոց 1153 թիւն
 ինչանակէ . յայտնի է որ , մեկ Յորելեանը յիստուն տա-
 լի է . որն որ . քաներեքով բազմապատկելով եւ երեք
 թիւն ալ վրան աւելցնելով այնչափ կընէ . ըսել է որ
 յամի Տեառն 1704 ին վախճաներ է :

Հետեւեալ յիշատակարանն ալ , վերոյիշեալ շինման
 ուղղութեամբն սեղանին ճակատը զետեղած մարմարիոն
 խաչարձանին տակը գրուած է :

ՈՎ ԿԵՆՍԱՏՈՒ ՍՈՒՐԲ ԽԱԶ ՓՐԿՉԻՆ
 ՆԵՐԿԵԱԼ ԱՐԵԱՄԲ ԿԵՆԱՐԱՐԻՆ
 ԲԱՐԵԽՕՍԵԱ ՅՕՐՆ ԱՀԱԳԻՆ
 ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ՄԵՃ ՏԵԼԵՏԻՆ (1)
 ՀԻՆՈՂ ՍՐԲՈՅ ԱՅՍՄ ՏԱՃԱՐԻՆ
 ԹՎԻՆ Ո . Ճ . Խ . Ի . (2)

Եկեղեցւոյն արեւմտեան կողմի դրան դուրսի ճակա-
 տին վերայ , քարին երեսը փորուած է հետեւեալ արձա-
 նագրութիւնն :

(1) Տէր , յաւանան բառ է . որ կըսանիւ պապնաւիկն :

(2) Յմէ Տեառն 1695 :

ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՀԵՈՐՀՕՔ ՍՈՒՐԻ
ՀՈԳԻՈՅՆ ՀԻՆԵՑԱԻ ԳԵՂԵՅԿԱԶԱՐԴ ՏԱՃԱՐՄ ԱԼԻ
ԲՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻՆ ՎԵՐԱԿԱՅՈՒԹԵԱՄ
ՎԱՐԻԱՆԱՅ ԱՍՏՈՒԱԾԱՐԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՒ ՕԳՆԱ
ԿԱՆՈՒԹԵԱՄԲ ԲԱՂԱՔԻՍ ԵՒ ԹԱՂԱՍ ԺՈՂՈՎԴՈՒ
ՅԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՍԸՀԱԹ ԽԱՆԻՆ ԵՒ ԻՐ ԲԵՀԵՆ
ՄԱՀՈՐՈՒՏ ԱՂԱՅԻՆ Ի ԹՎԻՆ Ռ. Ժ. Դ. ԱՄԻՆ .

Ասկէց 22 տարի առաջ 1842 ին սոյն եկեղեցւոյն առ
րաժայր գմբեթը խարխլած լինելով , նոյն ժամանակին
Առաջնորդ Վարդան Եպիսկոպոսին եւ քանի մը բարե-
պաշտ անձանց ջանիւքն եւ աշխատասիրութեամբն , ու
Ժողովրդոց ձեռնտուութեամբն նորէն շինուած է . ինչ
պէս որ գմբեթին բոլործիքը դուրսի կողմը գրուած հե-
տեւեալ արձանագրութենէն յայտնի է :

Ի ԾԱՅՐ ԹՈՒՈՅՍ ՄԵՐ ՏՕՄԱՐԻՍ ԻԶ ՅՈՒԵԼԻՆԻ ԻՆ
ՆԵԱՍ ԹՈՒՈՅ ՊԱԿԱՍ ՀԱՇՈՒԻ ՅՈՒՆԻՍ ԱՄՍՈՅ ԺԱ
ՅՈՅԺ ԴԱԹԵՆԱՅԵԱԼ ԺԱՄԱՆԱԿԻՍ ՀԻՆՈՒՄՆ ԵՂԵԻ
ՈՒՐԲ ԳՄԲԵԹԻՍ . ԾԵՐՈՒՆԱԶԱՐԴ ՏԵԱՌՆ ՎԱՐԴԱ
ՆԻՍԱՐԻ ԵՒ ԲԱԶ ՀՈՎՈՒԱՊԵՏԻՍ . ՄԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈ-
ՊՈՍԻՍ , ՄԻՇՏ ՄՇՏԱՇԵՆ ՎԱՆՕՐԵԻՅՍ ՀՕՐՍ ՄԵՐՈՅ
ՏԵՐ ՂԱԶԱՐԻՆ , ԿԻԹՆԱՄԱՏՈՅՅ ՄՕՐՍ ՍԱՌԱՅԻՆ
ԵՂԲՕՐՍ ՄԵՐ ՏԵՐ ՊԱՏԱՍԱՐԻՆ , ԵՒ ԵՂԲՕՐՍ ՄԻՒ-
ՍՈՒՄ ԱԻԵՏԻՍԻՆ , ԲՈՒԵՐՍ ԻՄՈՅ ՄԱՐԻԱՄԻՆ ԵՂԲՕՐՍ
ՈՐԴԻ ՓՈՔՐ ՂԱԶԱՐԻՆ , ԺՈՂՈՎԱԿԱՆ ԵՒ ԿԵՆԴԱՆԻ
ԽԱԶ ՄԱՆՈՒԿԻՆ , ԱՅՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ ԲՐԻՈՏՈՆԵԻՅ .
ՈՐԲ ԸՆԹԵՈՒՆՈՒՔ ՏՈՒՔ ԶՈՂՈՐՄԻ ՎԵՐԱԿԱՅՈՒ ԳՐԻ
ԳՈՐ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ . Ռ . Մ . Ղ . Ա . ԹՈՒԻՆ .

Սոյն գմբեթին դուրսին կողմը վեցանկիւնի շինուած
է , եւ դիմացէ դիմաց չորս հատ խաչաձեւ լուսամուտ-
ներ ունի :

Եկեղեցւոյն արեւմտեան կողմի դրան առջեւը դաւիթ
մը կայ . ուր տեղ չորս քարաշէն գլանաձեւ սիւններու

վերայ հաստատուած չորս կամարներ կան, որոց վերայ ծածկուած է. եւ այս կամարաց մէյ մէկ ծայրերն, եկեղեցոյն պատին կպած չորս կիսաբոլորակ սիւններու վրայ զետեղեալ է. նաեւս սոյն սիւններուն վրայ հաստատուած ուրիշ չորս կամարներ ալ կան, որոց վերայ դիտմամբ բաց թողուցած են. որ ձմեռն տանեաց վերայի ձիւներն սըրբած ժամանակնին, անկեց մէկ մասն դիւրութեմ վար կլեցնեն: Սոյն գաւիթին մէջ չորս աղբիւր մը կայ. փողոցին մէջ եղած վանքին արեւելեան կողմի դրան դիմացի հասարակաց համար շինուած մշտահոս քաղցրահամ աղբիւրին ջուրին մէկ մասն, ժամանակաւ այս աղբիւրէն կլազէ հղեր, որուն համար կըսուի թէ վանքին անպահաւ նութիւնն է: Թէ վանքն եւ թէ թաղին բնակիչքն սոյն աղբիւրին ջուրն այժմ հաւասարապէս կգործածեն:

Կլարոնախոյ:

ՋԱՆԳԱՎ ՄԵՌԵԼՈՑ

Ո՛հ այս ի՞նչ ազդու ձայն է որ հատ ընդ հատ հարուածներով կհնչուի, որ զիս հորձանուտ ալիքներէն ազատէ:

Կարթնեամ ես աղմկած խորհուրդներէ. եւ ուր ուրեմն կլմանամ որ մեռելոց դամբանական զանգակին ձայնն է:

Ո՛վ մեռելի մը միտս բարեաւը, դու ի՞նչ վսեմ զգացմունքներ կառթես:

Այս ձայնը կլսեմ եւ այն մեռելին ետեւէն սրտի մտք կսլանամ դէպ ի յաւիտեանականութիւն, այսինքն անդունդին, եւ երկնային փառաց կամ դժոխոց եւ արքայութեմ

մեջ , անդ կտեսնեամ այն անխուսափելի աղագայն , դատաստանն , գործոց վարձատրութիւն , պսակն եւ տանջանքն . յուսկ ուրեմն յետոյ դառնալով եւ աչքս մարդկային զեղծմանց վրայ յածելով , անձս սաստիկ սոսկման եղծակայ կգտնամ :

Դու ո՛վ մեռելի մը մնաս բարեաւը , որչափ ազդու է քո բարբառդ : Այս ձայնը կլսեմ . . կիրքերս ալեաց պէս յուզելով , փոխ ընդ փոխ միմեանց կյաջորդեն , իրարու դէմ կկռուին , սէրն եւ ատելութիւնը , երկիւղն եւ արիւթութիւնը , յոյսն եւ անյուսութիւնը . բայց ես յուսոյ վերայ կդնեմ իմ խարխիս . արիական սրով , աճային սիրոյ վահանովն կզինուորիմ եւ ալ չեմ վախնար մահուան շանթերէն :

Ո՛վ դու վերջաբանութիւն մեռելոց . քու ձայնդ որչափ որ սիրելի է արդարին , նոյնչափ սոսկում կպատճառէ անիրաւին :

Վերջապէս այս զանգակը երբ կզարնուի , ննջեցելոյն բարեկամաց լալիւնն ալ զոյգ կլսեմ . կարելի որ որդեկորոյս մօր մը լացը կամ այրի հարսի մը հեծկտալն է այն , որ անոր երթաս բարեաւ կասեն :

Հազարաւոր տեսակ , հազարաւոր բաղդի տէր մարդիկ մի եւ նոյն վախճանն ունին կասէ առածը . հօօրը տկարին , հարուստը աղքատին , եւ գերիջր գերեալին հետ ի միասին պիտի պառկին այն արտերուն ախօսեցողուն մէջ մինչեւ ի գալուստ Դատաւորին : Ուրեմն սնտոյի են ամէն հեշտութիւններն , թաւամելի վայելչութիւններն . եթէ այսպէս է , անոնք կարօղ չեն զմեզ ապահովցընել , եւ մեր սրտին դողը կտրել , մինչ մեր ջափեալ վայրկեաններն ամէն մէկ զարկով ամէն ժամանակ մեր դէմ կապառնան :

Արդարեւ ամենուն վախճանը մէկ է, եւ շատ թաղա-
ւորներ, շատ հարուստներ, շատ իշխաններ տեսայ, որոնք
մեռան եւ թաղեցան. որոնք աղքատներէն բոլորովին
կտրուելին. նաեւ իմ սիրելեացս մահն ալ տեսայ անոնց
վերայ շատ լացի. եւ պիտի լամ. մինչեւ օր մալ ինձ
համար եւս հնչուի այս զանգակը:

Երէն. Թ. Լ. Ժ.

Ս. Ս. Զրափայ:

ՀԱՆՌԻՍ ՀԱՐՅԱՔՆՆՈՒԹԵԱՆ ՅԻՍՈՒՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՎԱՆԱՅ:

Այս օրերս քաղաքիս դպրոցին մէջի աշակերտաց ուս-
մանց հարցաքննութեան հանդէսը կատարուեցաւ, ի ներ-
կայութեան Գերապատիւ Իգնատիոս Սրբազան Արքե-
պիսկոպոսին, ու թէ եկեղեցական եւ թէ աշխարհական
հանդիսականաց ու վարժապետաց եւ դպրոցին ուսումնա-
սէր ազգայնամ Հոգաբարձուաց: Ազգային երգերէն ե-
տեւ նորին Սրբազնութիւնն սկսեց իւրաքանչիւր աշա-
կերտաց ուսմունքներն քննել, ինչպէս որ նոցա տուած
համարձակ պատասխաններուն համար Արծիւ Թիւ 2.
երես 54ին մէջ խօսեցանք, որոց ինն ամսուան մէջ ստա-
ցած այսչափ յառաջադիմութիւնէն յայտնապէս կերեւար
որ, եթէ այս ընթացքն շարունակուի, անտարակոյս քա-
նի մը տարուան մէջ այնպիսի պտուղներ յառաջ պիտի
դնեն, որոնք ազգասիրութեան բարեբարոյութեան եւ ու-
սումնասիրութեան նախանձելի օրինակներ հանդիսանա-
լով, քաղաքիս մեծ պածանք պիտի լինին:

Ուսմանց նիւթերն էին, Սրբազան պատմութիւն,
Քրիստոնէական վարդապետութիւն, Ազգային պատմու-
թիւն, Բերականութիւն եւ վերլուծութիւն, Թարգմա-
նութիւն յաշխարհաբանէ ի գրաբան եւ ի գրաբանէ
յաշխարհաբան, եւ նախաճաշիկ անունով տպուած դա-
ստետրին վրան վարժուած հասարակ ընթերցմունք: որն
որ տղայոց շատ օգտակար գրքոյն մըն է:

Նաեւ չմոռնամք ըսելու որ, պատուելի Բարսեղեան
Սարգիս վարժապետն իւրաքանչիւր դասու աշակեր-
տաց, ամէն մէկին ինք ամսուան մէջ քանիկական օր
դպրոց եկած չլինէնուն համար պատրաստած ցուցակը,
յականէ յանուանէ կարգալով, հանդէսին ներկայացուց-
որն որ տղայոց իւրեանց դասէն ետ չմնալու համար, շա-
րժեղակ ամէն օր դպրոց գալու մասին մեծ օգուտ եւ
ազդեցութիւն կրնայ ընել:

Բոլոր հանդիսականք ոչ թէ միայն պատուելի Դասա-
տունն սորվեցուցած ուսմանց արդեանց եւ ջանիցը վե-
րայ բերկրեցան, այլեւ միանգամայն նորա ազդասիրու-
թենէն բարեբարոյութենէն եւ կրթութենէն աշակերտք
օրինակ ունելով եւ դաստիարակուելով, հետեւաբար ազ-
գին մէջ պիտանի եւ օգտակար անդամներ յառաջանա-
լիքին վերայ մեծ յայտով եւ ակնկալութեամբ ուրա-
ցած, զինքն սիրալիք խօսքերով պատուասիրեցին. եւ
նորին Սրբազնութիւնն ալ ազգին կողմէն շնորհակալ ե-
ղաւ ու քաջաբերեց զինքն. եւ ամէն մէկ աշակերտաց
յառաջադիմութեան աստիճանին համեմատ՝ արժանութեայ
խաչերն բաշխելու ժամանակն, իւրաքանչիւրին պարտ
ու պատշաճ եղած յորդորներ եւ խրատներ տալով խր-
րախուսեց, եւ պատուելի Դասատունն աշխատութիւնն

սրակելու համար, մեծապատիւ Հոգաբարձուաց հետ նո-
րա ամսական վարձքն աւելցնելու տնօրէնութիւն ը-
րաւ, որոնք ամէն քը մէկէն իմացուցին որ, ասիկայ ի-
րեն լի ու լի վաճառութիւն մը չեն համարիր, վասն
զի կղզան որ եթէ այս ընթացքն անընդհատ շա-
րունակէ, իւր աշխատութիւնն աւելի մեծամեծ վար-
ձուց եւ հատուցմանց արժանի է. եւ խոստացան ալ որ
տնտարանոյս քիչ ժամանակէն ի գործ պիտի դնեն. որ
այն ալ փոխարէն իւր գոհութիւնն եւ շնորհակալութիւն
այստեց: Եւ ահա այսպիսի փառաւոր կերպով հանդէսն
վերջացաւ:

ՃՀՐԱՌԻՏ ԴԱՍՏԻԱՐԱՍՈՒԹԵԱՆ ՊՏՈՒՂՆԵՐ

ՊՏԱՌԵԾ՝ ՄԱՏԵՄԱՏԻԿ

ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿ

ՀՈՒՒ ՅԱՍՈՒԷ ԱՌՔՈՅՐ ԻՒՐ

ՍԻՐԵԼԻ ՔՅՈՐ

Երեկ երեկոյ որ դարնանային վայելչութիւն կը քերականար,
եւ նստած էի ծառի մը տակ, կխաղաղայի հովուական փո-
ղի հետ աչքս հօտին վրայ դարձուցած որ դալար խոտեր
կծարակէր, սիրուն վտակ մը կոռոզէր այս մարգագետնին
վրայ, ուր ոչխարները միմեանց հետ կխայտային:
Այն վտարիկ գիւրբը որ դպրոցին մէջ կը կարդայի,

բովս դալարեաց վրայ դրուած էր . բայց ես զքեզ կերե-
ւակայէի : Արեգակը նոր մարը մտած , դեռ սլաքով մը կը-
կարմրցընէր ամպերն եւ կոսկեզօծէր ծորակին վերայ բար-
ձրացած մէգը : Հ . քաբըլէն կանցնէր , նախ իմ խաղիս
տկանջ դրաւ , յետոյ մտիկնալով տեսաւ սիրելի գրքոյիս
որ միշտ վերաս կկրեմ յանգին յիշատակ բարի վարժա-
պետիս : «Արդալ գիտես որդեակ , » ասաց քաղցրու-
թեամբ այս բարի եկեղեցականը . այո՛ պատասխանեցի եւ
գիրքս բռնած յաջողակութեամբ երեսի մը չափ կար-
դացի : Նա բոլորովին զարմացած՝ ինձի ասաց , ո՞ւրկէց
ես , եւ ո՞վ են քոյ ծնողքդ որք կարող եղեր են զքեզ ա-
մենայն խնամօք դաստիարակել , բարձրաստիճան են ար-
դեօք , եւ դուք ի՞նչ կընէք այս գիւղին մէջ , այն ատեն ես
մեր բոլոր պատմութիւնը անոր կարդացի , թէ ինչպէս
պատեցողմը զմեզ աղքատացուց , հալածեց մեր հայրենի-
քէն . եւ թէ ինչպէս մեր հօրմէն զրկուեցանք եւ մեր
մայրն որ թաննանպերկի մէջ հիւանդ կպառկի , դու քոյր
իմ որ կխնամես եւ քո ձեռաց աշխատութեամբդ կպաշտ-
պանես իւր կեանքը . վերջապէս ես ալ , ասի անոր , վի-
սանթալի հարուստ երկրագործէ մը վարձու բռնուած եմ
զձեզ մխիթարելու , քանի մը բան վաստակելու յուսով :
Մեր այս թշուառութեան արկածը պատմած ժամանակս
արտասուքը կթրչէր աչքերս :

Այն ատեն Հ . քաբըլէն ասաց քաղցրութեւ . «Մխի-
թարուէ որդեակ եւ մի լար . ծնողացդ պէս առաքինի ե-
ղիր , ես կհաւատեմ որ քոյ բաղդդ իլաւ անդր պիտի դառ-
նայ : » Յետոյ քսակէն վայլուն դրամ մը հանեց ինձի
տղաւ . ես զայն խեղճ մօրս կուղարկեմ , ասա իրեն թէ
որչափ զինքը կսիրեմ ու կյարգեմ . եւ միշտ աղօթքիս մէջ

իրեն Աստուծակ առողջութիւն եւ բարօրութիւն էխնդ-
րեմ որ արժանի է :

[illegible]

3-1-LF:

Եւ իսկ ինչպէս իրարմէ իրար զօրացանք իւրեանց Եւ իսկ ինչպէս իրարմէ իրար զօրացանք իւրեանց

At present we find the following

... ..

ՎՍԵՄԱՓԱՅԼ ԱՊՏՈՒԼԼԱՀ ՓԱՇԱՅԻՆ

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ Ի ՎԱՐԱԳ

Պաշկալանայ Նահանգին Վսեմաշուք Ապտուլլահ փաշան, այս օրերս քաղաքիս Բարձրապատիւ Իւսսակալին տեսութեան եկած լինելով, որն որ իւր հարազատն է .

դարձեալ իւր տեղն Վերադառնալու ատենը, ի վարաց
 եկաւ. որուն հետ քաղաքիս Հայազգի երևւելիներէն ուղ-
 ղեկից էին Մեծապատիւ Մինաս Աղայն, Սէֆերեան Աւե-

որիս Աղայն : եւ նորին վսեմութեան գանձապետ Սէֆէր-
եան Զովհաննէս Աղայն . վանքիւ միաբանութիւնն , եւ
աշակերտք ալ ազգային երգերով , նորին բարձրութեան

Լայե լուչ եղած արժանավայել կերպով դիմաւորեցին . որն
որ ուսումնական եւ լեզուագէտ անձ մը լինելով . սիրով
եւ հետաքրքրութեամբ վանքիս թէ տպարանին եւ թէ

Դպրոցին բարեկարգութիւնքն տեսնալու բարեհաճեցաւ. եւ յիշեալ երեք Յարգելիներն ազդարարութեամբ վառուած եւ ուրախացած, ազգին փառք ըծայող սոյն

Հաստատուածեանց յլրայօք նորա հետօքքըրական հարցմանց մանրամասնաբար պէտք եղած տեղեկութիւններն կուտային : Նորին Ստեմուծիւնն դպրոց եկած ժամա-

նակը, աշակերտք թէ տաճկերէն եւ թէ հայերէն լեզ-

ուսալ յօրինեալ ազգային երգերով, եւ թէ վարժարանիս
 յառաջագէմ աշակերտներէն թօխմախեան Արսէնն Գալ-
 դիերէն ճառ մը կարդալով նորա գալուստն շնորհաւորե-
 ցին, (որուն հայերէն թարգմանութիւնն հետեւեալն է.)
 նորին Ասեմութիւնն ալ որ քաջ գաղղիւրէնագէտ էր, ա-
 մենայն ուշադրութեամբ ճառը մտիկ ընելով շատ ուրա-
 խացաւ, եւ ինքն ալ իւր քաղցրաբարոյ բնաւորութիւն
 փոխարէն իւր սէրն հաւանութիւնն, շնորհակալութիւն
 եւ համարմունքն զգալի նշանով մը յայտնել ուզելով, բը-
 նագիրն իւր հետն տանելու բարեհաճեցաւ: Յիշեալ ա-
 շակերտին ներկայացուցած թէ լուսանկարի գործիքն եւ
 թէ բաղմամբիւ պատկերներն եւ դժագրութիւնքն ու-
 սումնասիրական հետաքրքրութեամբ զխտեց. եւս քաղա-
 քական աշխարհագրութեան տախտակաց վրայի երեւելի
 տեղեաց վրայօք հարցմունքներ ըրաւ. թէ եւ դրերն
 հայերէն էր, բայց տեղերուն նշաններէն՝ տրուած պա-
 տասխանաց ուղղութիւնն կիմանար, մանաւանդ որ նոցա
 պատասխան տալէն առաջ ինքն ալ տեղերն կ'ցուցնէր:
 Նաեւս զպրոցին մէջ դաս տրուած ուսմանց տեսակաց
 վերայ տեղեկութիւն ստացաւ: Եւ այս ամէն բարեկոր-
 դութիւններն տեսնալէն ետեւ ըսաւ. «Ասիայի խորերն
 այսպիսի անկեանց մէջ մեր Օսմանեան Տէրութեան պար-
 ծանք բերող Հայազգի հպատակաց այսպիսի յառաջագի-
 մութիւնքն տեսնալուս համար, արդարեւ իմ զգացած ու-
 րախութիւնս անպատմելի է. Ա՜ճ ձեր իմաստութիւնն
 էվելլցնէ եւ այսպիսի ուսմանց եւ բարեկարգութեանց
 մէջ օրէ օր գարգացնէ:» Այսպիսի սիրալիր խօսքերով
 եւ զոխութեամբ իւր մարդասիրութենէն յառաջ ե-
 կած բարեմաղթութիւններով զամենքն պատուեց. եւ

գարոցին ալ առատ պարգեւներ տուիրեց. եւ դէպ ի իւր
տեղն ճամբայ ելաւ. Ինչպէս որ Բարձր Հաճի Ահմէտ
Փաշան ալ անցեալներս վանքս եկած ժամանակը, նոյն
պէս առատաձեռնութեամբ տուէրներ ըրաւ գարոցին. որն
որ թիւ 2 : Արժւոյն մէջ գրեւոր մոռցեր էինք :

ԻԱՂԱԻԲԻՆ ԶԱՌԻՆ ԶԱՅԵՐԻՆ ԹԱՐԳՄԱՆԱԻԹԻՒՆՆ :

ՎՍԵՄԱՓԱՅԼ ՏԵՐ

Ես փոքրիկ անձ մըն եմ, բայց մեծ սիրտ մը կունեմ,
նամ, ձեր վ հափառութեան այցելութիւնն ողջունելու :

Իրգարեւ մեծ բարեսրտութիւն է որ դուք ձեր հըպա-
տակաց վանքերէն մեկուն այցելութեան ելած էք. բայց
ինչ կըտեսնաք սոյն բնակարանիս մէջ. զարմանալի բա-
ներ. . . Տպարան մը, Ասիոյ խորերուն մէջ. Վարժա-
րան մը, մթապատ անդունդներուն մէջ :

Այո՛ մեք կաշխատիմք աստ ընդ հովանեաւ մեր բա-
րերար Աստուծոյ. սոյն գաւառիս լոյս մը տալու համար :

Ո՛հ տէր իմ, այս գաւառիս մէջ կը թաղաւորեն շատ
թշուառութիւնք, շատ խեղճութիւնք. վասն զի մեր
փողոցներն լեցուած են աղքատներով, չկայ աստ երկրա-
գործութիւն մայրն. վաճառականութեան, վասնզի չկայ
մէկըմէկ սիրելի, մինչ Ածային պատուէրն սիրեցէք զմի-
մեանս կասէ :

Վսեմաւորալ տէր, Ինքեցէք ինծի ասելու, որ մեք
երկու ազգ եմք կրօնքով տարբեր, բայց յանուն մարդ-
կութեան պէտք էր մի լինելինք. այն միութիւնը որ մայր

կլինէր մեր ամէն բարեաց :

Այս ցաւալի վիճակին մէջ, մեք կարող եմք դարձեալ երջանկանալ. թէ որ ունենամք աշխատութիւն եւ երկրագործութիւն, մեր բարերար կայսեր պաշտպանութեան ներքեւ եւ ձերդ Մեծապատուութեան :

Այս մեր փափաքն է եւ ձեր կամքը : Ո՛վ Ա՛ծ իմ, պահէ մեր բարերարներն յերկար ամս, եւ աւելի մեր բարեգութ ՍՈՒԼԹԱՆ ԱԶԻԶ կայսեր կեանքն եւ սորին Մեծապատուութեան որ աստ ներկայ կգտնուի. եւ այս, մեր հանապազօրեայ աղօթքն է :

ՄԵՏ ՅԱՐԳԱՆՈՒ ՎԵՏԵՄԵՆ

1864 Յունիս 27

Ուրիշիկէ խնարհ ծ.

Ի ՎԱՐԱԳ

ԿՈՐՈՒՍՏ ԴՐԱՆՏԻՆ

Ահա գիշեր սեւաթոյր Ագինայի

ձորերուն,

Պատեց բնութեան մառախուղն. մեր նախահարց

սիրտերուն.

Նոր արթնցած ի քնէն կարծես երազ

տեսեր են,

Եւ փափկութեան դրախտին միջի անլախճան լոյսն

կխնդրեն :

Ո՛հ լուսոյ տեղ հագեր են մաշկեայ վառթար

ըզգեստներ,

Անմահ փառաց սուրբ պսակէն ամենեւին

են զրկուեր .

Այրքերն ամէն տիրել են անմեղ անբիծ

սրտերուն ,

վախն ու երկիւղն բռներ է ամենապարզ

բնութեան :

Խաւարն իջաւ ու մթնեցուց շուրջ գտնուած

անտառներ ,

եւ Ադինայ Աստուածատունկ ծառոց տուաւ

իւր քօղ սեւ .

Երկու հոգի ձեռն ի ծնօտ նստած կողքան

դէմ դրախտին ,

Գիշեր պատեց սոցա վերայ եւ կը ծփան մէջ

խաւարին :

Անտառք ու ծառք թռչունք սողունք եւ ամենայն

բնութիւն ,

Լեցին գետոց գոռում գոչում նաեւ առուաց

խոխոջիւն .

Դրախտից յաքսոր վարեալ մարդոյն վրայ մեծ սուգ

են բռնել ,

Որք հեծեծեն գլուխ ի կոր ձեռք դողդոջուն

բարձեալ վեր :

Չիք բնակարան անձնապահիկ եւ ոչ խլճիթ

մի գոնէ ,

Այլ բացօդեայք դէմ Եդեմայ նստած հոգոց

կհանեն .

Չիք կերակուր ոգեպահիկ գեղ եւ քաղցրիկ

պտուղներ ,

Զոր ուտէին մէջ Ադինայ Աստուածային
այն պարզեւ :

Սոքա անմեղ կամ մեղաւոր օձն էր պատճառ
այն ոճրոյն :

Զոր սերմանեց սիրտ գեղեցկին , տուաւ պտուղ
ժանտագոյն ,

Մահահրաւէր սարսուռ տուաւ սոցա խնրիտու
մարմինին :

Երբ լսեցին ահեղագոյ վերջին վճիռ
Արարչին ,

Թէ հող էիք կրկին ի հող դարձէք փոշի
այս երկրին :

Աստուած յերկինքս կորոտայ սանդարք սարսին
կողման ,

Ամպ մառախուղ շուրջ պատեր է փայլակք յերկիր
կը տեղան :

Պատուէր կուտայ շրեշտակադ կենաց ծառէն
արգելեն ,

Չլինի Ագամ ու Եւան նորա պտուղը
քաղեն :

Մինչ գազանք , շուրջ , ամեհիք սարսին թաղչին
եւ խոյս տան ,

Խոր տխրութիւն խոր լուռութիւն երկիր պատեր
զամենայն :

Մինչ փայլ լուսին կիսիզախէր անտառներու
ստուերովք ,

Երկուք տխուր կից թեւ ընդ թեւ ոհ վշտովն

արտաքին օր : արտաքին օր : արտաքին օր :
Արշալոյսն մօտեցաւ օրն բացուալ լուսոյ լաւագոյնի :
Ճաճան չնեւր : Եւ ինչ որ ասուցաւ զայն ինչ որ ասուցաւ :
Արտաքին օր : արտաքին օր : արտաքին օր :
Կը վաշխէր : Կը վաշխէր : Կը վաշխէր :
Բոսիկ ոտքով կը քալէին զուգահասակ :
Ընկերներ : Ընկերներ : Ընկերներ :
Թրջած ոտքերն յերկնից ցօղէն գետին ի հող :
Կկալէր : Կկալէր : Կկալէր :
Արեգական փայլուն ճաճանչք այս երկուքը
երբ տեսան ,
Եւ դարերու վսեմ խորհուրդ նոցա ելաւ
երեսն :
Փոքր մի ցնծաց իրենց տխուր սիրտ ընդ տեսել
սիրելի ,
Եւ յուսալով աչք ի յերկին բոսիկն յերկիր
կթափին :

Սարգսր : Սեփեան :
Դ : Մ : Ս : Ս : արգայ :

— Գ —
ԹԵ ԲԱՆԴԻՇՅ ԵՒ ԹԵ ՆՈՐԱ ՄԱՀՄԱՆԱԿԻՑ ԵՂՈՂ ՈՐՉՅ
ԳԱՆՈՐԱՅ ԱՂԴԱՅՈՐՈՑ ՈՐԱՄԿԱԿԱՆ ԼԵՂՈՒՆ , ԹԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՈՒՐԻՉ ԳԱՆՈՐԱՅ ԱԿՆ , ԳԱՆՈՐԱՆԿԱՆ ԵՆ ՕՐՈՒՐ ԱՂ-

գաց բառերով խառն է, բայց նոցա մէջ այնպիսի գրա-
բառ բառեր ալ կան, որ ուրիշ գաւառներու եւ երեւե-
լի քաղաքաց մէջ եղած ազգային ք զանոնք միայն մատե-
նագրութեանց եւ բառարանաց մէջ կրնան գտնալ. մա-
նաւանդ բանիբուն ազգասէր ազգային մը, իսկ եւ
նախդիրներուն նոցա խօսակցութեանց մէջ գործածուիլն
տեսած ժամանակը, նախնի դարուց ազգայնոց խօսած
գրաբառին եթէ ոչ նմանը՝ գոնէ նոյն ժամանակի աղա-
ւաղեալ աշխարհաբառին մէկէն ի մէկ ինքզինքը ժամա-
նակակից լինելու պէս գտնալով, մեծ մխիթարութիւն
կզգայ. ու մէկու մը իւր մեռեալ սիրելիին դիակին վերայ
նայելով ողբալու առեւիք, յանկարծ նորա վերայ կենդա-
նութեան նշոյլ մը եւ շարժում մը տեսնալու ժամանակը
անպատմելի կերպով ուրախանալուն պէս, նորա չափ լի
յուսով կուրախանայ ու կսքանչանայ:

Որոնք կըսեն Գնացի յեկեղեցին. զնամակներն առին փարոսն ի քա-
ղաք. Գնացի է ի Գիւղ. ուրիշ գաւառէ եղող ազգային մը
մէկէն ի մէկ անկատար (գնացեր էի) բային խմատով
զուլցուած կկարծէ, չի՞ Գիւղէն բերին. յատկացուցիչն
յոտկացեալէն առաջ դնելով, չնախդիրն ալ յատկա-
ցուցչին վերայ կընեն:

Ահաասիկ այս պատճառաւ ասոնք գրաբառ գըր-
ուածքներն, աշխարհաբառէն աւելի դիւրաւ կհասկնան.
բայց ցաւալին այն է, որ այս երկու գաւառաց մէջի ազ-
գայնոց հայկաբանութեան տեղեակ եղող ուսումնասէրնե-
րէն զատ, միւսներն ամէնքն ալ թէ գրաբառ ոճերուն
ու բառերուն, եւ թէ այս նախդիրներուն ազնուութիւնն
եւ յարգն չգիտնալով, իւրեանց խօսակցութեանց մէջ ա-
ռանց զգալու երբեմն երբեմն նախդիրներն գործածե-

լու գանցառութիւն կրնեն . եւ գրաբառ բառերն ալ
հետզհետէ այլայլելու վերայ են : Աւելի ափսոսալին
այն է որ , գիւղացիք որոնք քաղաքացիներէն աւելի
գրաբառ բառեր կգործածեն , կկարծեն թէ անոնք գա-
ւառական խորթ բառեր են . ուստի՝ քաղաքներն գացած
ժամանակնին , նոցա նմանել ուզելով , իւրեանց ուղիղն
կծգեն ու անոնց աղաւաղեալ մասերն կգործածեն :

Այսամբ որ սոյն գաւառաց թէ դպրոցաց դասա-
տուքն , եւ թէ ուսումնասէր ազգայինք , ազգասիրական
ոգևով սոյն կորստեան առջեւն առնելու կջանան , գիտ-
նալով որ քանի որ ուսումնականութիւնն ծաղկի , գրաբա-
ռին մօտենալու վերայ եղող աշխարհաբառն ալ հետըզ-
հետէ իւրեանց երկրին մէջ ընդհանրացած ժամանակը ,
բարեբաղդութեամբ իւրեանց մէջ արդէն գտնուած գրա-
բառին այն ազնիւ ոճերն եւ յատկութիւնքն ալ անտարա-
կոյս անոր հետ միանալով , քիչ ժամանակէն թէ Հայաս-
տանեայց ուրիշ գաւառաց , եւ թէ մանաւանդ ուրիշ եր-
կիրներու եւ տէրութեանց մէջ եղող գաղթական ազգայ-
նոց ցանկացած գրաբառն , ամէնէն առաջ իրենք պիտի
խօսին . եւ նոցա ամէնուն ալ նախանձելի եւ պանծալի
օրինակ պիտի հանդիսանան , եւ ինչպէս որ բոլոր Հա-
յաստանին պարծանք եղող , ըստ մեծի մասին մեր նախ-
նեաց խորենացիին (Կեսրոպայ) նման մատենադրաց գրա-
բառին ազնուութիւնն ալ , դարձեալ այն ժամանակի
սոյն գաւառաց մէջ խօսուած ընտիր գրաբառին ար-
դիւնքն եղած լինելն յայտնի է . որոց պտուղն այս
օրուան օրս ընդհանուր ազգը վայելելու վերայ է : Եւ
ահաասիկ մենք ալ օրագրոյս մէջ , տեղ տեղ ի .) եւ շ
նախդիւրներն գործածել սկսած ենք , մանաւանդ յ . նախ-

[illegible]

աշխարհիսէ . խորանորհուրդք ազգասէրք , եթէ այս հիւ
 անդուծին բժշկելու իւրպէք հնարք մը գիտէք , դուք
 ալ հրատարակեցէք շրադրաց մէջ . վասն զի ազգին ան
 գին ժամանակներն զարմանալի արագութեամբ դատնա
 լու վերայ է , բայց զայն ցնոյ ատնող շատ քիչկայ :
 Ժամանակաւ մարդուն մէկը , երկարատեւ սաստիկ
 ջերմէ մը բռնուելով եւ ոչ մէկ գեղով մը բժշկուելու հը
 նարք մը չըտնալէն ետեւ , իր բարեկամներէն մէկուն
 տուած խորհուրդովն , առաւօտուն կանուխ կարծննայ ու
 փողոցէն առաջին անգամ անցնող մարդուն կհարցնէ . Թէ
 ջերմին դեղն ի՞նչ է . այն ալ մէկէն ի մէկ կպատասխանէ
 Թէ « Ես ուրիշ բան չեմ գիտեր , միայն Թէ սա գիտեմ
 որ Աճ կրնայ բժշկել , հիւանդն այս խօսքը լսելուն պէս
 մէկէն ի մէկ իւր թմբուծենէն սթափելով , ամենայն հա
 ւատով եւ սիրով նորա կապաստանի կկենդդէ ու վերջա
 պէս զարմանալի սքանչելեօք կառողջանայ : Եմանապէս
 ազգք ամէն մէկ բուժարկութիւն ըրած ժամանակը ,
 պետք է միտքը բերէ Թէ այս ջերմն մի միայն Աճ կըր
 նայ բժշկել . յիշելով Մարգարէին այն վճիռը Թէ « Ե
 Թէ ոչ Տէր շինէ դտունն , ի նանիւր վաստակին շի
 նողք նորա : Եթէ ոչ Տէր պահէ զբաղաք , ընդունայն
 տքին պահապանք նորա , իերեւայ Թէ յառաջագիմու
 Թեան այս արգելքներն եւ դժբաղդութիւնքն , ազգայ
 նոց իւրեանց տկարութիւնը չճանչնալով բոլորովին իւր
 եանց զօրութեանը ապաստանելէն յառաջ եկած է .
 չգիտնալով եւ չզգալով , որ այն ազգասիրութեան եւ
 ազգին բարերարելու եռանդն , սրտերնուն մէջ վառող
 արծարծող աներեւոյթ սքանչելի զօրութիւն մը կայ .
 որ անձնապատանութեամբ զանի շիջուցանելու տեղի

կուտան : Ուստի այսպիսիք պէտք է գիտնան որ , աշխարհիս մէջ որչափ որ մարդկային ազգին օգտակար մեծանուն բարերարներ եկած են , եւ իւրեանց ազգին մեծագործութիւններ ըրեր են , անոնք ամէնքն ալ մի միայն Նախախնամութեան զօրութեանը ապաստանելով կարող եղեր են իւրեանց սրտին մէջ ծնած առաքինութիւններն ճշիւսպէս ու անկեղծ սրտով առանց սնայիառութեան գործադրել եւ մինչեւ վերջը յարատեւել , եւ աշխատել են հաւատքով եւ յուսով , գիտնալով որ իւրեանց գործոց փոխարէն հատուցումն պիտի առնեն թէ աստ եւ թէ միւս անդրաւելի կենաց մէջ :

Յիրաւի ազգը որչափ որ այս նեղութիւններն կկրէ , բայց մէկ կողմանէ ալ ազգային վարչութեան մէջ հաստատամիտ իմաստուն եւ ազգը կառավարելու մասին պէտք եղած տեսակ տեսակ կատարելութիւններ ունեցող ճշմարիտ ազգասէրներէն զուրկ մնացած չլինելուն համար , բոլորովին անմխիթար չէ մնացած . որոնք ազգային գործերն արիասրտութեամբ եւ յամենայն զօրութենէ յառաջ տանելու համար երբէք աշխատութիւն չեն խնայած . քաջ գիտնալով որ առանց արիութեան եւ ոչ մէկ գործ մը եւ առաքինութիւն մը չկրնար գործարուիլ . որոնք արդարեւ ամենայն երախտագիտութեան եւ շնորհակալութեան արժանի են : Յուսով եմք որ Նախախնամութեան շնորհիւ , հետզհետէ քիչ միջոցէն այսպիսեաց առաքինութեանց նախանձաւոր , բազմաթիւ ճշմարիտ ազգասիրաց խումբ մը տեսնալու բարեբաղդութիւնն պիտի ունենամք :

Յ. Պ. Կ. Գալիպօլի
Սիւստէն Պ. Լըծուլի

ԵՆԶԵՆՈՒԷՐ

ԳՈՐԾԵՆԸՔ ԲՆԵՆԻՄԻՔԵՆ

ՈՒՆՆՈՒՄ ԳՐԱԿԱՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ՍՈՒՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ՏԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ՏԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՆԻՒԹԱՅ :

Խրատք հոգւոյն առ մարմինն :	57
Աստղիկն իմ սիրելի :	61
Տեսարանք հայրենի աշխարհաց Բաղէշ :	64
Չանգակ մեռելոց :	71
Հանդէս հարցաքննութեան Յիսուսեան վարժարանին վրայ :	73
Ճշմարիտ դաստիարակութեան պտուղներ :	75
Վսեմափայլ Ապտուլահ Փաշային Այցերութիւն ի վարագ :	77
Գաղղիերէն ճառին հայերէն թարգմանութիւն :	79
Կորուստ Գրախոսին :	80
Թէ Բաղիշոյ եւ Թէ Մշոյ ազգայնոց աշխարհաբառ լեզուին վերայ տեղեկութիւն :	83
Զեւրմին դեղը ինչ է :	86

ԳԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԿԵՐԱ ԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՒԿ
 Ի Վան , 'Ի Բաղէշ, 'Ի Մոսկ, 'Ի Վարն, Երկուսն 'Ի
 Խան Ղուրուշնոյ արծաթ Մեծիփէ
 Իսկ Կ. Պօլսէ - Տաճկաստանի Կորէշ Խաչմէրը Երէս
 արծաթ Խան Ղուրուշնոյ Մեծիփէ
 Ի Ռուսաստանէ - Ի Պարսկաստան չորս արծաթ Մաննի
 Զանապարհին Ժախը Խաչմէրը պիտի վճարէ :